

սած ըլլալու պատիւը Յովհաննէս Թիւթիւնճիի կը պատկանի, ինչպէս եւրոպացի 'Կղինակ մը կը հաստատէր:

Բայց կարելի՞ է արդեօք ընդունիլ, թէ հաարքեպիսկոպոսին միակ նպատակը այս երկրախուզական աշխատանքն էր: Եթէ այո՛, ինչո՞ւ պիտի վարանէր գրի առնելու իր այս անմեղ առաջադրութիւնը և օգտակար հետաքրքրութիւնը:

Իր բոլոր կեանքը փոթորկալից արկածախընդրութեանց մէջ անցընող մէկը, որ բնաւ գիտական հետաքրքրութիւններ չէր ունեցած, հաւանական չէ որ Նեղոսի ակը գտնելու նպատակով գացած ըլլայ Հապէշիստան:

Պարզապէս դիպուած մըն է, որ զինք կը դարձնէ գիտական հետազօտութեան մը առաջապահը կամ աշխարհագրական խուզարկու մը, որ կանխած է ուրիշները՝ երեւան հանելու համար Նեղոսի ծնունդ առած վայրերը, որոնք մինչև այն ատեն անծանօթ կը մնային:

Բայց այս ժխտումները գոհացում չեն տար մեզի, վասնզի անկարելի է ենթադրել, թէ Յովհաննէս եպօ. Թիւթիւնճի, իր ժամանակին անցուդարձերուն, պայքարներուն և դէպքերուն խառնուած անձնաւորութիւն մը աննպատակ գացած ըլլայ մինչև Հապէշիստան, երկիր մը, որ շնորհիւ իրմէ առաջ հոն ապրող ուրիշ հայ եպիսկոպոսի մը, միջազգային քաղաքականութեան խառնուած և մասնաւորապէս Արեւելեան մեծ ու անվախճան խնդրոյն մէջ մասնակցութիւն ունենալու կոչուած էր (1):

(1) Հետաբերական է դիտել ցալ, քէ աւելի կանուխ, Ռուբինեանց օրջանին, դարձեալ Հայ մը, Հեթում՝ Կառկիսի սէրը, ուզած է